

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՎԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴԻՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲՆ-ԴՇ-19/02**

ք. Երևան

« 14 » « փետրվարի » 2019թ.

Բնապահպանության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ **Վ.Զիլավյանի** (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրենի ժ/պ **Ա.Լազարևի** (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Շրջակա միջավայրի մոնիթորինգ և տեղեկատվության ապահովում» ծրագրային միջոցառման՝ բաժին 05, խումբ 06, դաս 01, ծրագիր 1016, միջոցառում 11002 (շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության տրամադրման աշխատանքներ, այսուհետ՝ Ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին Պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1. Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Որոշմամբ նախատեսված՝ մինչև **226 949 800 (երկու հարյուր քսանվեց միլիոն ինը հարյուր քառասունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ** գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:
- 1.2. Ծրագրով նախատեսված Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են Պայմանագրի Հավելված N¹-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

- 2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝**
 - 2.1.1. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.
 - 2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ուղչամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.
 - 2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝
 - ա) Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,
 - բ) Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),
 - գ) իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.
 - 2.1.4. Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:
- 2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝**
 - 2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.
 - 2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:
- 2.3. Պետական մարմինը պարտավոր է՝**
 - 2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.
 - 2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.
 - 2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.
 - 2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 5 օրացուցային օրվա ընթացքում Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը:
- 2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝**
 - 2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվառումը հաշվապահական հաշվառման վարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան.
 - 2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.



- 2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.
- 2.4.4. Պետական մարմնին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին աճողական հաշվետվություններ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 5-ը, իսկ 4-րդ եռամսյակին՝ մինչև դեկտեմբերի 15-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ 20-օրյա ժամկետում ամփոփ հաշվետվություն.
- 2.4.5. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.
- 2.4.6. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.
- 2.4.7. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան.
- 2.4.8. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում գոյացած խնայողություններն ուղղել իր կանոնադրական գործառույթների իրականացմանը՝ նախապես համաձայնեցնելով Պետական մարմնի հետ:

3. Մոնիթորինգը


- 3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
- 3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:
- 3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:
- 3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
- 3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

- 4.1. Պայմանագրի Հավելված N2-ով հաստատված, տվյալ եռամսյակին բաժին ընկնող գումարը յուրաքանչյուր ամսվա առաջին 5 աշխատանքային օրվա ընթացքում, հավասար մասնաբաժիններով Պետական մարմինը փոխանցում է Կազմակերպության բանկային հաշվին՝ որպես տվյալ եռամսյակի կանխավճար:
- 4.2. Եթե Կազմակերպությունը տվյալ եռամսյակի համար նախատեսված միջոցառումները
 - ա) իրականացրել է ամբողջությամբ և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունը ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ Պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով.
 - բ) ամբողջությամբ չի իրականացրել, ապա կիրառվում է Պայմանագրի 2.1.2 և (կամ) 2.4.6 կետերով սահմանված պայմանները և իրականացված միջոցառումների արժեքի չափով Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, իսկ հաջորդ կանխավճարը վճարվում է չիրականացված միջոցառման չափով պակաս և Պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով.
 - գ) իրականացրել է նախատեսվածից ավելի և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ Պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով, իսկ ավել իրականացված միջոցառման չափով վճարումն իրականացվում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 20-ը, սակայն ոչ ավելի Պայմանագրի 1.1 կետով սահմանված գումարից:
- 4.3. Պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո՝ Կազմակերպությունը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը:

5. Կողմերի պատասխանատվությունը

- 5.1. Պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է ստացված ֆինանսական աջակցության գումարները չիրականացված միջոցառման չափով վերադարձնել Պետական մարմնին և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը կողմնակցորեն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:



6. Պայմանագրի գործողության ժամկետը

- 6.1. Պայմանագրի պայմանները տարածվում են 2019 թվականի հունվարի 8-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

- 7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

- 8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը (Հավելված №2) հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
- 8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:
- 8.3. Եթե տրամադրվող դրամաշնորհով նախատեսված ծրագիրը և միջոցառումները ենթակա չեն ավելացված արժեքի հարկով հարկման կամ ենթակա են հարկման պետական բյուջեից ավելացված հարկի վճարման համար տրամադրվող գումարի դիմաց ավելի փոքր գումարի չափով, ապա նշված հարկի վճարման համար նախատեսված հատկացումների գծով չօգտագործված գումարները 2019 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
- 8.4. Կազմակերպությունը մինչև 2020 թվականի հունվարի 31-ը պետական մարմին են ներկայացնում տեղեկատվություն 2019 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին ստացված դրամաշնորհի շրջանակներում հաշվարկված և պետական բյուջե վճարված ԱԱՀ գումարների, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջե մասին» օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ մասի պահանջներին համապատասխան չօգտագործված և ՀՀ պետական բյուջե վերադարձված գումարների վերաբերյալ:
- 8.5. Պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ: Պայմանագրի Հավելվածներ №№1-ը և 2-ը համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:
- 8.6. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Բնապահպանության նախարարություն

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք

ՖՆ գործառնական վարչություն

ՀՀ 900011018661

ՀՎՀՀ 02507198

Բնապահպանության նախարարության

գլխավոր քարտուղարի ժ/պ

Վ.Զիլավյան

(ստորագրություն)

Վ.Տ.



ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ

ք.Երևան, Չարենցի 46

ՖՆ գործառնական վարչություն


ՀՀ 900018003302

ՀՎՀՀ 02659596

«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ

Ա.Լեւոնյան





ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Բնակատեղիային նախարարության

պլանավոր ըարտողարի ժ/պ

Վ.Ջիլավյան
 (ստորագրություն)
Վ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Շրջանային օկրուգային կենտրոնի և տեղեկատվության կենտրոն»



ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

NN հ/հ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառնությունների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնա-ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1.	«Մակերևութային ջրային օբյեկտների որակի մոնիթորինգի իրականացում»	«Մակերևութային ջրերի 6 ջրավազանային կառավարման տարածքի, 14 գետավազանի 53 ջրային օբյեկտի 127 դիտակետից այդ թվում 12 գործող արդյունաբերական պոլիգոններից ջրի նմուշառման, դաշտային չափումների, ֆիզիկաքիմիական անալիզների և որակի գնահատման իրականացում»	«Մակերևութային ջրերի որակի մասին տեղեկագիր. եռամսյակային՝ 4 հատ, տարեկան՝ 1 հատ, տարեկան ամփոփագիր 1 հատ, ջրի որակի քիմիական կարգավիճակի 2019 թվականի ըարտեզ 252 հատ, որից ամսական՝ 192 հատ եռամսյակային՝ 45 հատ տարեկան՝ 15 հատ» «Մակերևութային ջրերի 6 ջրավազանային կառավարման տարածքի, 14 գետավազանի 53 ջրային օբյեկտի 127 դիտակետում որակի 2019 թվականի տվյալների թագա՝ 37360 ցուցանիշ նախապես ներկայացնելով պլան ժամանակացույց ըստ ամիսների:	1. «Մակերևութային ջրերի որակի մասին ջրաքիմիական տվյալների առկայություն»: 2. «Մակերևութային ջրային օբյեկտների որակի գնահատականների առկայություն»: 3. Օպերատիվ հաղորդագրություններ ջրի «բարձր» և «արտակարգ բարձր» (V դաս) աղտոտվածության վերաբերյալ: 4. Մակերևութային ջրերի որակը բնութագրող ցուցանիշների առավելագույն ցանկ՝ 1. Գույն 2. Ջերմաստիճան 3. Հոտ 4. Թափանցիկություն 5. Լուծված թթվածին 6. Թթվածնի հագեցվածության տոկոս 7. Թթվածնի քիմիական պահանջարկ 8. Թթվածնի 5-օրյա կենսաքիմիական պահանջարկ 9. Էլեկտրահաղորդականություն 10. Ջրածնային ցուցիչ 11. Հանքայնացում	30.12.2019թ.	83 289 710

				12. Կախված մասնիկներ 13. Կոշտություն 14. Հիդրոկարբոնատներ 15. Կարբոնատներ 16. Նատրիում 17. Մագնեզիում 18. Կալցիում 19. Կալիում 20. Ամոնիում իոն 21. Սիլիկատ իոն 22. Նիտրիտներ 23. Նիտրատներ 24. Սուլֆատներ 25. Քլորիդներ 26. Ֆոսֆատներ 27. Ֆոսֆոր ընդհանուր 28. Ֆտորիդներ 29. Պղինձ 30. Երկաթ 31. Արսեն 32. Կապար 33. Քրոմ 34. Վանադիում 35. Կոբալտ 36. Ցինկ 37. Մանգան 38. Սոդիդներ 39. Ալյումին 40. Նիկել 41. Բոր 42. Բերիլիում 43. Սելեն 44. Անագ 45. Անտիմոն 46. Օրգանական ածխածին 47. Ընդհանուր կապված ազոտ 48. ՋԵԴ առաջնային աղտոտիչներ (33) 49. ՋԵԴ երկրորդային աղտոտիչներ (8) 50. Նավթամթերքներ (բենզոլ, տոլուոլ, քսիլոլ) 51. Ալյ		
--	--	--	--	--	--	--

2.	<p>ՀՀ բնակավայրերի օդային ավազանի որակի մոնիթորինգի իրականացում</p>	<p>ՀՀ բնակավայրերի գետնամերձ շերտի մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի իրականացում և գնահատում</p>	<p>1. ՀՀ 10 բնակավայրի օդային ավազանների աղտոտվածության վիճակի վերաբերյալ տեղեկագրեր. եռամսյակային՝ 4 հատ, տարեկան՝ 1 հատ, տարեկան ամփոփագիր՝ 1 հատ: 2. ՀՀ 10 բնակավայրի մթնոլորտային օդի գետնամերձ շերտի աղտոտվածության բաշխման (չաքաթական, ամսեկան, եռամսյակային, տարեկան) թարուեզ՝ 1339 հատ, որից շաքաթական՝ 1047 հատ, ամսական՝ 240 հատ, եռամսյակային՝ 32 հատ տարեկան՝ 20 հատ: 3. ՀՀ մթնոլորտային օդի գետնամերձ շերտի որակի 2019 թվականի տվյալների բազա՝ 354400 ցուցանիշ</p>	<p>1. ՀՀ մինչև 10 բնակավայրի մթնոլորտային օդի գետնամերձ շերտի որակի գնահատականների և աղտոտիչների կոնցենտրացիոն բաշխման թարուեզների առկայություն: 2. Օպերատիվ հաղորդագրություններ բնակավայրերի օդային ավազանների «բարձր» և «արտակարգ բարձր» աղտոտվածության վերաբերյալ (յուրաքանչյուր դեպքի համար): 3. Օդի գետնամերձ շերտում որոշվող ցուցանիշների առավելագույն ցանկ՝ 1. Ծծմբի երկօքսիդ 2. Ազոտի երկօքսիդ 3. Ազոտի օքսիդ 4. Ածխածնի մոնօքսիդ 5. Գետնամերձ օզոն 6. Ընդհանուր փոշի 7. Փոշու մեջ գտնվող մետաղներ, տարրեր, 8. Այլ</p>	30.12.2019թ.	52 816 850
3.	<p>Հողերի աղտոտվածության մոնիթորինգի իրականացում</p>	<p>ՀՀ-ում հողային ծածկույթի հետազոտական մոնիթորինգ (նմուշառման վայրերը ընտրանքային՝ ըստ վտանգավորության) և ֆիզիկաքիմիական անալիզներ, հողային ծածկույթի աղտոտվածության գնահատում:</p>	<p>ՀՀ-ում հողերի աղտոտվածության վիճակի վերաբերյալ տեղեկագրեր. տարեկան՝ 1 հատ, տարեկան ամփոփագիր՝ 1 հատ: Հողային ծածկույթի որակի 2019 թվականի տվյալների բազա՝ 500 ցուցանիշ:</p>	<p>1. Հողային ծածկույթի որակի գնահատականների առկայություն: Հողերի աղտոտվածության վիճակը բնութագրող ցուցանիշների առավելագույն ցանկը՝ մինչև 25 մետաղ:</p>	30.12.2019թ.	935 000

6

4.	<p>Մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների անդրահամայնային տարածման մոնիթորինգ: Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկման և գնահատման համատեղ ծրագրի (EMEP) իրականացում</p>	<p>Մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների անդրահամայնային տարածման մոնիթորինգի իրականացում, առաջնային տվյալների ստացում, մշակում, գնահատում, պահպանում, տրամադրում: Հայաստանի կողմից ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտվածության անդրահամայնային տարածման մասին» կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարում: Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկման և գնահատման համատեղ ծրագրի իրականացում</p>	<p>1. Մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների անդրահամայնային տարածման մոնիթորինգի տեղեկագիր. ամսական՝ 12 հատ, եռամսյակային՝ 4 հատ, տարեկան՝ 1 հատ, տարեկան ամփոփագիր՝ 1 հատ: 2. Տվյալների տրամադրում Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկման և գնահատման համատեղ ծրագրի Քիմիական կոորդինացիոն կենտրոնի (Նորվեգիայի օդի հետազոտությունների ինստիտուտ) պահանջվող ձևաչափով: 3. «Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկման և գնահատման համատեղ ծրագրի» շրջանակում Նորվեգիայի օդի հետազոտությունների ինստիտուտի կողմից կազմակերպվող ամենամյա միջաբորտոր ստուգաճշտման իրականացում: 4. Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկման և գնահատման համատեղ ծրագրի Քիմիական կոորդինացիոն կենտրոնի և ՀՀ մթնոլորտային օդի որակի 2019 թվականի տվյալների բազա՝ 17220 ցուցանիշ:</p>	<p>1. Մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների անդրահամայնային տարածման մոնիթորինգային առաջնային տվյալների և գնահատականների առկայություն: 2. Հայաստանի կողմից ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտվածության անդրահամայնային տարածման մասին» կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարում: 3. Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկման և գնահատման համատեղ ծրագրի առկայություն:</p>	30.12.2019թ.	8 294 700
----	---	---	---	---	--------------	-----------



7

5.	Արաքս գետի աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիտորինգի իրականացում	Արաքս գետի ջրի և հատակային նստվածքի հայ-իրանական համատեղ մոնիթորինգի իրականացման միջոցառումներ՝ նմուշառում և նմուշների ֆիզիկաքիմիական անալիզներ, առաջնային տվյալների ստացում, տվյալների վերլուծություն: Արաքս գետի հայ-իրանական սահմանի հատվածում ջրի աղտոտման հնարավոր աղբյուրների և պատճառների բացահայտում, գնահատում:	<p>1. Արաքս գետի հայ-իրանական սահմանի հատվածի ջրի որակի վերաբերյալ տեղեկագիր. եռամսյակային՝ 4 հատ, տարեկան՝ 1 հատ, տարեկան ամփոփագիր՝ 1 հատ:</p> <p>2. Տարեկան ամփոփ վերլուծության փոխանակում իրանական կողմի հետ:</p> <p>3.Տվյալների փոխանակման վերաբերյալ համատեղ արձանագրություն՝ 1 հատ:</p> <p>4. Տվյալների համալիր վերլուծության պատրաստում և ներկայացում հայ-իրանական համատեղ ամենամյա նիստի ընթացքում: Արաքս գետի աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիտորինգի իրականացում՝ 2040 ցուցանիշ (1-ին եռամսյակ՝ 160,2-րդ եռամսյակ 680, 3-րդ եռամսյակ՝ 680, 4-րդ եռամսյակ՝ 520)՝ այդ թվում Արաքս գետի հատակային նստվածքների մոնիթորինգի իրականացում՝ 360 ցուցանիշ, Արաքս գետի ջրի որակի մոնիթորինգ 1680 ցուցանիշ:</p>	<p>1. Արաքս գետի հայ-իրանական սահմանի հատվածի ջրի և հատակային նստվածքի որակի մասին ֆիզիկաքիմիական տվյալների առկայություն:</p> <p>2. Արաքս գետի ջրի որակի վրա աղտոտման կետային ու դիֆուզային աղբյուրների և ճնշման գործոնների ներգործության գնահատականների առկայություն:</p> <p>3. ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարում:</p> <p>4. Արաքս գետի և վտակների ջրի որակը բնութագրող ցուցանիշների առավելագույն ցանկը՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Գոլցն 2. Ջերմաստիճան 3. Հոտ 4. Թափանցիկություն 5. Ջրածնային ցուցիչ 6. Լուծված թթվածին 7. Թթվածնի քիմիական պահանջարկ 8. Թթվածնի հնգօրյա կենսաքիմիական պահանջարկ 9. էլեկտրահաղորդականություն 10. Հանքայնացում 11. Կախված մասնիկներ 12. Կոշտություն 13. Սուլֆատներ 14. Հիդրոկարբոնատներ 15. Մագնեզիում 16. Կալցիում 17. Կալիում 18. Նատրիում 19. Ամոնիում իոն 20. Քլորիդներ 21. Նիտրիտներ 22. Նիտրատներ 23. Ֆոսֆատներ 24. Ֆոսֆոր ընդհանուր 	30.12.2019թ.	4 395 700
----	--	--	--	--	--------------	-----------

6.	Բնապահպանության նախարարության աշխատակազմում և նրա առանձնացված ստորաբաժանումներում տեղային համակարգչային ցանցերի և առկա համակարգչային տեխնիկայի ծրագրային և տեխնիկական սպասարկում և վերանորոգում, էլեկտրոնային փոստի, ինտերնետ կապի տեխնիկական սպասարկում Նախարարության պաշտոնական կայքի, սպասարկում Ընդունված կարգով եռալեզու ներկայացում ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքի սպասարկում ՕՊՊ համակարգի սպասարկում: ՋՌ-ԿԳ կայքի սպասարկում	Բնապահպանության նախարարության աշխատակազմում և նրա առանձնացված ստորաբաժանումներում առկա համակարգչային, տպագրական տեխնիկայի և պատճենահանման սարքերի, տեղային ցանցերի սպասարկում Համաձայն ընդունված կարգի նախարարության ստորաբաժանումներից ստացված տեղեկատվության մշակում, ամփոփում և տեղադրում կայքում: Գործող բազաների վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում և նոր բազաների նախագծում: ՕՊՊ (օդի պահանջվող օգտագործում) համակարգի սպասարկում:	Համակարգչային և տպագրական տեխնիկայի պարբերական ախտորոշիչ միջոցառումների իրականացում, անսարքությունների վերացում, web, E-mail և File սերվերների աշխատանքի կազմակերպում, տեղային ցանցերի սպասարկում: Կայքում նյութերի տեղադրում՝ ըստ սահմանված կարգի: Եռալեզու կայքի ամենօրյա թարմացում: Բնապահպանության նախարարության պաշտոնական կայքի, սպասարկվող համակարգչային տեխնիկայի, տեղային ցանցերի անխափան աշխատանքի ապահովում 95%-ով: ՕՊՊ-ի շտեմարանի նորացում ջրօգտագործման առցանց կառավարման համակարգի ներդրման համար նախատեսված սերվերի աշխատանք-ների կազմակերպում և սպասարկում:	<ol style="list-style-type: none"> 25. Ցինկ 26. Մոլիբդեն 27. Մանգան 28. Պղինձ 29. Երկաթ 30. Արսեն 31. Կապար 32. Քրոմ 33. Կադմիում <p>5. Արաքս գետի հատակային նստվածքները բնութագրող ցուցանիշների առավելագույն ցանկը՝ մինչև 35 մետաղ:</p> <p>Համակարգչային տեխնիկայի և տեղային ցանցերի անխափան աշխատանք</p> <p>Գործող 2 կայք՝ www.mnp.am և www.armmonitoring.am Շտեմարանների առկայություն</p> <p>ՕՊՊ –ի շտեմարան:</p>	30.12.2019թ.	17 565 000
----	---	---	--	---	--------------	------------



7.	«Քննապահական տեղեկատվության հասարակական կենտրոնի» (Օրիուս կենտրոնի) սպասարկում	Օրիուս կենտրոնի միջոցառումների կազմակերպում	1. Սեմինարների, բաց դասերի, հասարակական լուսմաների կազմակերպում: 2. Հասարակությանը տեղեկատվության տրամադրում. 3. Գրադարանի և ֆիլմադարանի այցելուների սպասարկում	Երևանյան Օրիուս կենտրոնի սպասարկում	30.12.2019թ.	1 591 540
8.	ՀՀ տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի իրականացում	ՀՀ տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակի մոնիթորինգի իրականացում ՀՀ տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի մոնիթորինգի իրականացում	Քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոտեխնիկական մշտադիտարկումների իրականացում 100 դիտակետերում Ջրի մակարդակի (ճնշման), ծախսի, ջերմաստիճանի չափումներ և դիտակետերի տեղադրում՝ 15940 ցուցանիշ ՀՀ 6 ջրավազանային կառավարման տարածքի ստորերկրյա ջրերի 40 դիտակետից ջրի նմուշառման, դաշտային չափումների, ֆիզիկաքիմիական անալիզների և որակի գնահատման իրականացում և որակի 2019 թվականի տվյալների բազա՝ 3200 ցուցանիշ: ՀՀ ստորերկրյա ջրերի քանակի և որակի վերաբերյալ տեղեկագիր. եռամսյակային՝ 4 հատ, տարեկան՝ 1 հատ, տարեկան ամփոփագիր՝ 1 հատ: Միջոցառումները կկատարվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, նորմերին և կանոններին համապատասխան: Աշխատանքային միջոցառումների հիման վրա ներկայացվում է հաշվետվություն ստորերկրյա ջրերի քանակական և որակական փոփոխությունների բնութագրերի վերաբերյալ՝ պայմանավորված բնական և տեխնածին գործոնների ազդեցությամբ /թղթային և էլեկտրոնային կրիչներով/:	Ստացված արդյունքները հնարավորություն կտան գնահատելու ստորերկրյա քաղցրահամ ջրերում տեղի ունեցող քանակական և որակական փոփոխությունները ջրերը սպառումից զերծ պահելու նպատակով. 1. էլեկտրահաղորդականություն 2. Ջրածնային ցուցիչ 3. Հանքայնացում 4. Կախված մասնիկներ 5. Կոշտություն 6. Հիդրոկարբոնատներ 7. Կարբոնատներ 8. Նատրիում 9. Մազեղիում 10. Կալցիում 11. Կալիում 12. Ամոնիում իոն 13. Սիլիկատ իոն 14. Նիտրիտներ 15. Նիտրատներ 16. Սուլֆատներ 17. Քլորիդներ 18. Ֆոսֆատներ 19. Ֆոսֆոր ընդհանուր 20. Ֆտորիդներ 21. Պղինձ 22. Երկաթ 23. Արսեն 24. Կապար 25. Քրոմ 26. Կադմիում 27. Ցինկ 28. Մանգան 29. Մոլիբդեն 30. Ալյումին	30.12.2019թ.	42 533 000


10

				31. Նիկել 32. Բոր 33. Բերիլիում 34. Սելեն 35. Կոբալտ 36. Անագ 37. Անտիմոն 38. Վանադիում 39. Ստրոնցիում 40. Բարիում		
9.	Շրջակա միջավայրի օբյեկտներում (հող, ջուր) ԿՕԱ-ների մնացորդային քանակների մոնիթորինգի իրականացում	«Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Առուկիովմի կոնվենցիայով ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման աջակցելու նպատակով, լաբորատոր հետազոտությունների իրականացում	Շրջակա միջավայրի օբյեկտներում (հող, ջուր) ԿՕԱ-ների որոշման նպատակով նմուշառման, ֆիզիկաքիմիական անալիզների և որակի գնահատման իրականացում՝ 300 ցուցանիշ:	Անալիտիկ հետազոտություններ	30.12.2019թ.	7 200 000
10.	Ռեեստրների ստեղծման աջակցություն	Թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի ռեեստրների ստեղծման աջակցություն	1. Թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման 20 օբյեկտների ուսումնասիրում: 2. Թափոնների հեռացման 11 վայրերի ուսումնասիրում, 3. Թափոնների էկոլոգիապես անվտանգ ոչնչացման, օգտահանման, և վնասազերծման, ինչպես նաև սակավաթափոն և անթափոն տեխնոլոգիաների վերաբերյալ միջազգային լավագույն փորձի և սեփական վերլուծությունների արդյունքում ուսումնասիրված տեխնոլոգիաների թիվը՝ 42	1. Թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների վերաբերյալ հաշվետվություններ 2. Թափոնների հեռացման վայրերի վերաբերյալ հաշվետվություններ, 3. Տեխնոլոգիաներ	30.12.2019թ.	2 880 000



11

11.	Թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման միջոցառումներին աջակցություն	«Շ տարածքում 2018թ. առաջացած թափոնների վերաբերյալ կազմակերպությունների կողմից ներկայացված վարչական վիճակագրական հաշվետվությունների ուսումնասիրում, վերլուծություն: Հաշվետվությունների թիվը 1050 (հազար հիսուն):	Կազմակերպություններում առաջացած թափոնների հաշվառում, դասակարգում՝ ըստ վտանգավորության աստիճանի և տնտեսության ճյուղերի ու սպասարկման ոլորտի:	Հաշվետվություններ	30.12.2019թ.	2 646 000
12	Երկրորդային հումքի վերամշակման և օրգանական թափոնների կրկնակի օգտագործման միջազգային փորձի ուսումնասիրում: Վտանգավոր թափոնների անվտանգ գործածությանը ներկայացվող պահանջների ուսումնասիրում	Երկրորդային հումքի վերամշակման և օրգանական թափոնների կրկնակի օգտագործման եղանակների և մեթոդների ուսումնասիրում: Պոլիբրոմինացված դիֆենիլ եթերներ (PBDEs) պարունակող թափոնների վերամշակման և ոչնչացման համար առկա լավագույն տեխնոլոգիաների և բնապահպանական իմաստով լավագույն փորձի մեթոդական ցուցումների մշակում:	Երկրորդային հումքի (թուղթ, պոլիէթիլեն և այլն) վերամշակման և օրգանական թափոնների կրկնակի օգտագործման միջազգային փորձի ուսումնասիրում՝ ՀՀ-ում ներդնելու նպատակով: Պոլիբրոմինացված դիֆենիլ եթերներ (PBDEs) պարունակող թափոնների վերամշակման և ոչնչացման համար առկա լավագույն տեխնոլոգիաների և բնապահպանական իմաստով լավագույն փորձի մեթոդների ուսումնասիրում:	Մեթոդներ, Մեթոդական ցուցումներ	30.12.2019թ.	2 802 300
ԸՆԴԱՄԵՆԸ					226 949 800	





ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Բնապահպանության նախարարության
գլխավոր քարտուղարի ժ/պ
Վ.Զիլվյան

(ստորագրություն)
Վ.Տ.



ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԴԻՆ

Կառավարության կոորդինացիոն կենտրոնի
տնօրենի ժ/պ
Վ.Տ.

ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագիր

Ծրագրի դասիչը՝	1016	Ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
Միջոցառման դասիչը՝	11002				
Միջոցառման անվանումը՝	Շրջակա միջավայրի մոնիթորինգ և տեղեկատվության ապահովում				
Նկարագրությունը՝	Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կրամադրման աշխատանքներ				
Միջոցառման տեսակը՝	Ծառայությունների մատուցում				
Միջոցառումն իրականացնողի անվանումը՝	Մասնագիտացված կազմակերպություններ				
Արդյունքի չափորոշիչներ					
Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի իրականացում՝ ՀՀ 6 ջրավազանային կառավարման տարածքի 14 գետավազանի 53 ջրային օբյեկտի 127 դիտակետում ջրերի որակը բնութագրող 40-60 աղտոտիչների վերաբերյալ տվյալներ, ցուցանիշ		5500	18660	30220	37360
Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի իրականացում՝ ՀՀ 10 քաղաքում 15 դիտակայանում և 188 դիտակետում օդի աղտոտվածությունը բնութագրող 2-6 աղտոտիչների վերաբերյալ տվյալներ, ցուցանիշ		87651	175329	268359	354400
Արաքս գետի աղտոտվածության հայ-իրանական համագործակցության մոնիթորինգի իրականացում՝ Արաքս գետի ջրի որակի և հատակային նստվածքների աղտոտիչների վերաբերյալ տվյալներ, ցուցանիշ		2040	2040	2040	2040
Հողերի աղտոտվածության մոնիթորինգի իրականացում, ցուցանիշ		0	200	400	500
Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա անդրաօդային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համագործակցության (EMEP) ծրագրի		956	6614	12200	17220

շրջանակներում Հայաստանում օդի անդրաօդային աղտոտման մոնիթորինգի իրականացում, ցուցանիշ				
Սկորերկրյա քաղցրահամ ջրերի քանակի մոնիթորինգի իրականացում՝ ՀՀ 6 ջրավազանային կառավարման տարածքի 100 ջրաղբյուրում հիդրոներկրաբանական դիտարկումների (ջրի մակարդակ (ճնշում), ծախս, ջերմաստիճան և դիտակետերի տեղադրում) վերաբերյալ տվյալներ, ցուցանիշ	3980	7970	11960	15940
Սկորերկրյա քաղցրահամ ջրերի որակի մոնիթորինգի իրականացում՝ ՀՀ 6 ջրավազանային կառավարման տարածքի 40 ջրաղբյուրում ջրերի որակը բնութագրող 30-40 աղտոտիչների վերաբերյալ տվյալներ, ցուցանիշ	0	1600	1600	3200
Շրջակա միջավայրի օբյեկտներում (հող և ջուր) կայուն օրգանական աղտոտիչների մնացորդային քանակների մոնիթորինգի իրականացում, ցուցանիշ	75	150	225	300
Թափոնների գոյացման, վերանշակման ու օգտահանման ուսումնասիրվող օբյեկտների և հեռացման վայրերի թիվ, հազար	6	14	22	31
Ներկայացված վարչական վիճակագրական հաշվետվությունների ուսումնասիրություն և վերլուծություն, առաջացած թափոնների հաշվառում և դասակարգում, դրանց հիման վրա հաշվետվությունների կազմում, հաշվետվությունների ընդհանուր թիվ, հազար	0	0	1050	1050
Միջազգային լավագույն փորձի և վերլուծությունների արդյունքում մշակված տեխնոլոգիաների և տեղեկատվական արդյունքների թիվ, հազար	5	12	18	25
Բնապահպանության նախարարության սպասարկվող համակարգիչների, կայքի և տեղային ցանցերի թիվ, հազար	253	253	253	253
Շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների ամփոփում, այդ թվում՝ շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ եռամսյակային և տարեկան տեղեկագրեր, մակերևութային ջրերի որակի, սկորերկրյա ջրերի քանակի և որակի, մթնոլորտային օդի որակի տվյալների տարեկան ամփոփագիր, հազար	1	2	3	8
Մթնոլորտային օդի աղտոտվածության բաշխման շարաթակային, ամսական, եռամսյակային և տարեկան քարտեզներ, մակերևութային ջրերի որակի ամսական, եռամսյակային և տարեկան քարտեզներ, հազար	323	727	1103	1591
Շրջակա միջավայրի օբյեկտներում (հող, ջուր) ԿՕԱ-ների մնացորդային քանակների որոշում՝ համաձայն Արդյունքի Կոնվենցիայի, %	100	100	100	100
Ցուցանիշների համապատասխանության տեսակարար կշիռը (արդյունավետությունը) ծրագրով հաստատված մոնիթորինգային ցուցանիշներին, %	100	100	100	100
Բնապահպանության նախարարության պաշտոնական կայքի, սպասարկվող համակարգային տեխնոլոգիայի, տեղային ցանցերի անխափան աշխատանքի ապահովում (տրկոս)	95	95	95	95
Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)	56 737.5	113 474.9	170 212.4	226 949.8